

**ՀՀ հատուկ քննչական ծառայության
վարչության պետի տեղակալ պարոն Դ. Կոստանդյանին՝
Թիվ 62224715 քրեական գործով մեղադրյալ
Արաքս Հրաչյայի Դիլանյանից**

Հեռ. 093-65-73-06

**Միջնորդություն
մեկնելու թույլտվության վերաբերյալ**

Հարգելի պարոն Կոստանդյան.

Ձեր վարույթում քննվող **թիվ 62224715 քրեական գործով ինձ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի** ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

Տեղյակ եմ, որ սույն քրեական գործը քննվում է 2015 թվականի սեպտեմբեր ամսից, որի ընթացքում ես գտնվել եմ Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում՝ իմ մշտական բնակության վայրում:

2016 թվականի վերջին տեղեկացել եմ, որ իմ վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և իմ նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Հասկանալով մեղադրանքի լրջությունը և որպես օրինահարգ քաղաքացի 2017 թվականի հունվարին ներկայացել եմ քննությանը՝ քաջ գիտակցելով, որ իմ նկատմամբ քննության տվյալ փուլում կարող էին կիրառվել օրենքով նախատեսված հարկադրանքի ամենախիստ միջոցները: Այդ ժամանակ Դուք թույլատրել էք, որպեսզի ես հետ վերադառնամ Դուբայ: Դրանից հետո՝ 06.02.2017թ., սույն գործով վարույթը կարճվել է::

2018 թվականի հունիս ամսին լրատվության միջոցներով Միլվա Համբարձումյանի ելույթներից տեղեկացել եմ, որ՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացվել է և քննությունը շարունակվում է ու ես կրկին ձեռք եմ բերել մեղադրյալի դատավարական կարգավիճակ:

Քննությունն ընթացքում ինչպես Ձեր, այնպես էլ իմ պաշտպանների միջոցով տեղեկացել եմ քննությանը ներկայանալու իմ պարտականության մասին և 2018 թվականի դեկտեմբերի 18-ին ամուսնուս և աղջկաս հետ ժամանել եմ Հայաստան, որի մասին հայտնել եմ Ձեզ և ներկայացել քննության: Ձեզ եմ տրամադրել եմ իմ ՀՀ քաղաքացու անձնագիրը, տվել եմ ցուցմունքներ, որով Դուք էլ կփաստեք, որ քննությանն օգնել եմ, դրանից մեկ ամիս անց առերես հարցաքննվել եմ Սիլվա Համբարձումյանի հետ:

Իմ ընտանիքի անդամների հետ միասին 2019թ. հունվարին Դուքայ վերադառնալու տոմս ունեի, սակայն քննությամբ պայմանավորված իմ Դուքայ մեկնելը ձգձգվելու հանգամանքով պայմանավորված այդ տոմսերը չօգտագործվեցին և նոր տոմսեր ենք ձեռք բերել 11.01.2019թ.-ի չվերթի համար, սակայն իմ մեկնելը կրկին հնարավոր չեղավ և ընտանիքիս անդամները վերադարձան Դուքայ, իսկ ես միայնակ մնացի Հայաստանում և քանի որ միայնակ եմ, իսկ տարիներ առաջ Պտղունք համայնքի մեր տնից գողություն են կատարած եղել, վախենում եմ միայնակ մնալ տանը և ստիպված իմ ունեցած մի քանի ծանոթների տանն եմ գիշերում:

Ինչպես քննությանն եմ հայտնել՝ ես Դուքայում զբաղվում եմ անշարժ գույքի առուվաճառքով, վարձակալությամբ և համարվում եմ անշարժ գույքի գործակալ: Ներկա պահին ես ծառայություններ եմ մատուցում մի շարք անձանց և կազմակերպությունների, մասնավորապես, ես յուրաքանչյուր ամսվա ավարտին, ըստ պայմանագրային պարտավորության, վճարում եմ իմ հաճախորդների վարձավճարները: Նշված գործողությունները կատարելու համար անհրաժեշտ է մի քանի օրով գտնվել Դուքայում, կատարել փոխանցումները, տեղեկանալ հաճախորդներիս պահանջներին ու գանգատներին և այլն: Հակառակ դեպքում մարդիկ կգրկվեն իրենց վարձակալած բնակարաններից, տարածքերից, իսկ ես մեծ նյութական վնասներ կկրեմ և կկորցնեմ իմ աշխատանքս:

Ի դեպ ես նաև թարգմանչի լիցենզիա ունեմ, որի համար երկու տարին մեկ անգամ վճարում եմ կատարում և մի քանի օրով պետք է դասընթացի մասնակցեմ: 2018թ. դեկտեմբերի 16-ին վճարումը կատարել եմ, սակայն դասընթացի չեմ ներկայացել և եթե 2019թ. փետրվարի 5-15-ը դասընթացի չմասնակցեմ, ապա լիցենզիայից կգրկվեմ և մոտ 2000 \$-ի չափ վճարում պետք է կատարեմ, նոր քննություն տամ և նոր լիցենզիա ստանամ:

Ավելորդ չեմ համարում նշել, որ ներկայումս անգործության եմ մատնված այստեղ իսկ Դուքայում մեր տունն էլ է վարձով և ամուսնուս հետ պետք է աշխատենք այդ

վարձավճարի գումարը վաստակելու և վճարելու համար, ուսանող երեխայիս վճարներն ու ծախսերը հոգալու և այլնի համար, ինչից ես զրկված եմ և շուրջ մեկուկես ամիս գտնվում եմ Հայաստանում, ուր միայն գումար եմ ծախսում:

Սա իմ ֆինանսական վիճակի մասին և եթե ես առաջիկա 10-15 օրերին Դուբայում չլինեմ, կարող եք վստահ լինել, որ մեծ ֆինանսական կորուստներ կունենամ և տևական ժամանակ պետք է հաջողությամբ աշխատեմ, որպեսզի կարողանամ կորուսներս վերականգնել, եթե՝ հաջողվի:

Այսքանը թուուցիկ իմ ֆինանսական կորուստների մասին, իսկ բարոյական ընկճվածության, ընտանիքից առանձին լինելու փաստով պայմանավորված իմ և իմ ընտանիքի անդամների դժվարությունների մասին բառերով չեմ կարող ներկայացնել, ամեն օր հուզվում եմ:

Դուք տեղյակ եք նաև, որ 2018 թվականի դեկտեմբերին Դուբայում իմ աչքը վիրահատության է ենթարկվել, որից հետո մի քանի օր անց, Ձեր պահանջով եկել եմ Հայաստան: Ինձ բուժող բժիշկից ստանում եմ հեռախոսագանգեր հետվիրահատական հսկողության նպատակով պարտադիր այցելության ներկայանալու վերաբերյալ, հակառակ պարագայում տեսողական լուրջ խնդիրներ կարող են առաջանալ: Բժշկի նշանակած դեղերը վաղուց վերջացել են:

Ներկայումս բժիշկն իրեն ապահովագրելու համար արդեն գրավոր կերպով է ինձ ծանուցում: Հետվիրահատական ստուգումներն ու համապատասխան դեղերի նշանակումները, ըստ բժշկի, կարող են տևել առնվազն մեկ շաբաթ:

Պակաս կարևոր չէ նշել այն հանգամանքը ևս, որ իմ քննությանը ներկայանալու ժամանակահատվածում, սույն գործով նույն մեղադրանքով կալանքի տակ էր գտնվում մեկ անձ, երկու անձի նկատմամբ էլ հայտարարվել էր հետախուզում, որոնց նկատմամբ էլ խափանման միջոց էր ընտրվել կալանավորումը: Չնայած նշված հանգամանքին՝ ես ներկայացել եմ քննությանը և լավ հասկանալով, որ իմ նկատմամբ ևս կարող էր խափանման միջոց կիրառվել կալանքի ձևով:

Ամբողջ նախաքննության ընթացքում իմ դրսևորած վարքագիծը վկայում է այն մասին, որ ես երբևէ չեմ փորձել խուսափել քննությունից, մշտապես դրսևորել եմ պատշաճ վարքագիծ, քննության հետագա փուլերում ևս շարունակելու եմ դրևորել նույն վարքագիծը և աջակցելու եմ քննությանը:

Ներկա փուլում իմ տեսողական խնդիրների և աշխատանքային պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել 10-15 օրով մեկնել քաղաք Դուբայ՝ միջնորդությունում նշված

գործողությունները կատարելու համար, ինչի համար որպես վարույթն իրականացնող մարմին, անհրաժեշտ է Ձեր թույլտվությունը, ուստի՝

խնդրում եմ

թույլատրել ինձ՝ Արաքս Հրաչյայի Դիլանյանիս, Հայաստանի Հանրապետությունից 15 օր ժամկետով մեկնել իմ մշտական բնակության վայր՝ քաղաք Դուբայ:

Միջնորդության առաջին խնդրանքը բավարարվելու դեպքում խնդրում եմ ինձ ժամանակավոր հետ վերադարձնել ՀՀ քաղաքացու իմ անձնագիրը:

Պարտավորվում եմ Դուբայում գտնվելու ընթացքում անձամբ և իմ պաշտպաններ Լեոնիկ Հովհաննիսյանի և Ավետիք Կարապետյանի միջոցով Ձեզ հետ գտնվել մշտական կապի մեջ և անհրաժեշտության դեպքում առաջին իսկ հնարավորության/առաջիկա չվերթ/ դեպքում ժամանել Հայաստան և ներկայանալ քննությանը:

Կից ներկայացնում եմ իմ բժշկի գրավոր ծանուցման թարգմանությունը:

Միջնորդություն հարուցող՝

Արաքս Դիլանյան

30.01.2019թ.